

ներս, յուսարով նոյնը կատարել միւս կեանքին մէջ: Այս պատճառաւ ամէն յարաբերութիւն կը խզեմ հերձուածողներու հետ, եւ կը նդովեմ աստեանական եւ անդենական կեանքին մէջ իմ հպատակներէս ամէն անոնք, որ պիտի ըլլան ա'յնքան անհաւատարիմ որ պիտի ընդդիմանան տեսակ մը յամառութեամբ վաւերական այս գործին, զոր կատարեցի, եւ պիտի ուզեն ունէ կերպով թշնամի հանդիսանալ Հռոմէական Եկեղեցւոյ, այն մեծ եւ սուրբ Եկեղեցւոյն, այն եկեղեցւոյն որ բոլորովին Առաքելական է եւ միա'կ Կաթողիկէն:

Ես հրապարակաւ կատարեցի այս հաւատոյ դաւանութիւնը, զոր սրտիս մէջ ունեցայ երկար ժամանակէ ի վեր, առաջին օրը Օգոստոս ամսոյն 1129 տարին ըստ Հարոց Թուականին, եւ 1680ին ըստ Հռոմէականին. եւ ձեռամբ հաստատելու համար ինչ որ բերնով արտասանեցի, կը ստորագրեմ Յակոբ խոնարհ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ Ընդհանրական Եպիսկոպոս Հայոց» (13):

Այս իտալերէն եւ Ֆրանսերէն գրութիւնը, զոր թարգմանեցինք, պարզապէս բացատրականն է, ինչպէս ըսինք, հայերէն դաւանագրին. ուստի բնականաբար աւելի երկայն է բնագրէն:

Օրմանեան անարդար է, երբ «խեղաթիւ-

(13) Archivio Vaticano, Miscellanea, Ar-
madio III, Tomo 6, fol. 384.